

4. Ա. Ներսիսյան /

Ակնհայտ է, որ հասարակական հարաբերություններում հարկման դերը պայմանավորված է տվյալ հասարակությունում պետության ունեցած օբյեկտիվ դերով: Հասարակության զարգացմանն ու շերտավորմանը զուգընթաց պետության վրա դրվում են լրացուցիչ խնդիրներ հասարակության և նրա անդամների քարտեկցությունն ապահովելու նպատակով: Մասնավորապես, պետությունը պարտավոր է ապահովել իր անդամների կենսամակարդակի նվազագույն չափը, ազատ մրցակցություն և մատուցել որոշակի ծառայություններ:

Կարևորագույն այս խնդրի լուծման գործում պետությունն իրականացնում է բաշխման իր գործառույթը: Իսկ բաշխման հետ կապված որոշակի խնդիրներ հնարավոր է լուծել միայն պետական կարգավորման ճանապարհով, ինչը պահանջում է համապատասխան միջոցների առկայություն: Միջոցների հավաքագրումը հարկման եղանակով իր հերթին առաջացնում է հարկային համակարգ և հարկային հաստատություններ ունենալու անհրաժեշտություն:

Այլ կերպ, հարկային համակարգը դա տվյալ կոնկրետ պետության մեջ տվյալ պահին առկա հարկադրման էական պայմանների համախմբությունն է:

1992 թվականից սկսած ԼՂՀ հարկային քաղաքականության ձևավորումն ու նրա հետագա զարգացումը ընթացել և ընթանում է բարդ ռազմաքաղաքական և տնտեսական պայմաններում կապված քաղաքական անորոշության, պատերազմական գործողությունների, շրջափակման, շուկայական հարաբերությունների անցմանը բնորոշ ընդգծված սոցիալական լարվածության հետ:

Յուրաքանչյուր պետության հարկային համակարգը դա պատմական ազգային զարգացման արգասիք է: Այդ պատճառով հնարավոր չէ առանձնացնել այնպիսի էտալոնային բնութագրիչ, որն ընդհանուր լինի բոլոր երկրների համար: Կարելի է միայն տալ տարբեր երկրների հարկային համակարգի ընդհանուր բնութագրերը:

Անգամ զարգացած արդյունաբերական երկրները անհրաժեշտ հարկերի հավաքագրման նպատակով ձևավորում են տարբեր սկզբունքորեն հիմքերի վրա կառուցված հարկային համակարգեր: Եթե ԱՄՆ-ն, Կանադա, Նոր Զելանդիան, Բելգիան հարկային եկամուտները հավաքագրում են եկամտային հարկերի միջոցով, ապա Նորվեգիան, Շվեդիան, Ֆրանսիան, Ավստրիան, նախապատվությունը տալիս են ապրանքների և ծառայությունների իրացման շրջանառությունից գանձվող հարկերին:

Անցումային տնտեսությամբ երկրներում արդյունավետ հարկային համակարգի ձևավորմանը բացասաբար են անդրադառնում՝ -տնտեսության կառուցվածքը

-հարկային վարչարարության սահմանափակ կարողությունները
-տեղակատվության սակավությունը
-քաղաքական վերնախավի անպատրաստ լինելը:

Հարկային քաղաքականությունը դիտարկելով որպես օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից իրականացվող և իրականացման ենթակա միջոցառումների համալիր, որն ուղղված է հարկման օբյեկտների, սուբյեկտների, հարկերի դրույքաչափերի, հարկման մեխանիզմների և հարկային արտոնությունների հարցերի կարգավորմանը, կարելի է նշել, որ անցած ժամանակաշրջանում դրա իրականացումը պայմանավորված է եղել նորաստեղծ հանրապետության առջև ծառացած պետական շինարարության ռազմավարական խնդիրների լուծմամբ:

Այդ խնդիրների և հատկապես հարկային քաղաքականության ռազմավարական ուղղությունների մշակումն ու իրագործման առանձնահատկությունը ԼՂՀ-ում կայանում է նրանում, որ դրանք ոչ միայն ուղեկցվում են անցումային շրջանին բնորոշ դժվարություններով ու բարդություններով, այլև պատերազմական գործողություններով ու ՀՀ հետ տնտեսական ինտեգրացման խիստ անհրաժեշտությամբ պայմանավորված համաձայնեցված հարկային քաղաքականության վարման սկզբունքով:

Ամփոփելով, հարկային համակարգի ձևավորումը ԼՂՀ-ում, այն կարելի է բաժանել հետևյալ փուլերի

1. Հարկային համակարգի նախնական ձևավորման փուլ, որն ընդգրկեց հիմնականում 1992-94 թվականները: Այդ ժամանակաշրջանում ԼՂՀ Պետագույն խորհրդի 1992 թ. որոշմամբ կիրառության մեջ դրվեցին ՀՀ-ում ընդունված հարկային ոլորտին վերաբերող «Ավելացված արժեքի հարկի մասին», «Ակցիզային հարկի մասին», «Եկամտահարկի մասին» օրենքները, իսկ շահութահարկը հաշվարկվում և գանձվում էր ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի որոշմամբ սահմանված կարգով, որով նախատեսվում էր նաև շահութահարկի գանձում կոլտնտեսության աշխատավարձի ֆոնդից:¹ Պատերազմական գործողությունների պատճառով այդ տարիներին զգալի վնաս են կրել հանրապետության տնտեսության բոլոր ճյուղերը: Իրենց արտադրական կարողությունների 15-20 տոկոսի չափով էին գործում ԼՂՀ պաշտպանության բանակի կարիքների համար վերապրոֆիլավորված մեկ տասնյակի հասնող պետական ձեռնարկությունները, պետական

ԼՂՀ Պետագույն խորհրդի 1992թ. հունվարի 6-ի «ԼՂՀ տարածքում այլ պետությունների գործող օրենսդրական ակտերի գործողության մասին» և ԼՂՀ ՊՊԿ-ի 1992թ. օգոստոսի 28-ի «Ձեռնարկությունների և կազմակերպությունների շահութահարկի մասին» որոշումներ:

մեծածախ և մանրածախ առևտրական և սպասարկման միավորումներն ու ձեռնարկությունները, բավականին նվազ թվակազմերով կոլտնտեսություններն ու խորհրդային տնտեսության զործունեությամբ զբաղվող ոչ մեծ թվով անհատներ:

Այս պայմաններում խնդիր էր դրված խիստ կերպով հաշվառել բոլոր տնտեսավարող սուբյեկտներին, ապահովել ՀՀ առանձին օրենքներով սահմանված հարկման հիմնական բազաները/ շահույթը, իրացման շրջանառությունները, ֆիզիկական անձանց եկամուտները, հարկ վճարողները, իրավաբանական անձինք, ոչ իրավաբանական անձինք, առանձին քաղաքացիներ/, հարկերի դրույքաչափերը և այլն: Պետք է նշել, որ ի տարբերություն ՀՀ-ի, ԼՂՀ-ում հողի հարկը, գույքահարկը ներդրվել են ավելի ուշ, իսկ ֆոնդավճար ընդհանրապես չէր հաշվարկվում ու գանձվում: Գործում էր տրանսպորտային հարկը, որի վճարողներ էին հանդիսանում տրանսպորտային միջոցների տեր ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ամփոփելով այս փուլը, կարելի է ընդհանրացնել, որ պատերազմական դրությամբ պայմանավորված տնտեսության պետական կենտրոնացված դեկավարման ժամանակաընթացքում խնդիր էր դրված ԼՂՀ-ում աստիճանաբար արմատավորել շուկայական տնտեսաօրենքություններին բնորոշ հարկատեսակներ, հաշվի առնելով ՀՀ հետ միևնույն տնտեսական դաշտի ձևավորման հանգամանքը և տեղական առանձնահատկությունների կիրառման կարևորությունը/ սեփականաշնորհման և ապապետականացման տեմպերի ետ մնալը/, կազմակերպել բոլոր հարկատուների խիստ հաշվառումը: Ձևավորման այս փուլում խնդիր չէր դրված բյուջեի սեփական եկամուտների կազմում էականորեն ավելացնելու հարկային մուտքերը: Այսպես՝ 1992-1994 թ.թ. դրանք կազմել են սեփական եկամուտների ընդամենը 73 տոկոսը¹:

Ընդ որում, հարկային օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և հարկերի ու վճարումների գանձումները իրականացնում էին ֆինանսական մարմինների պետեկամուտների բաժինները, բանի որ ստեղծված էին հարկային տեսչությունները:

2. Հարկային համակարգի զարգացման երկրորդ փուլն ընդգրկեց 1995-98 թվականները, որի ընթացքում արդեն ավարտվել էին պատերազմական գործողությունները և ԼՂՀ իշխանությունները հարաբերական խաղաղության պայմաններում ձեռնամուխ էին եղել տնտեսական բարեփոխումների իրականացմանը:

ԼՂՀ վիճակագրության, պետեղբայրության և վերլուծության պետական վարչություն,
«ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները 1985-1995թ.թ.»,
Ստեփանակերտ, 1996

Այդ գործընթացը ապահովելու համար ԼՂՀ Գերագույն խորհրդի 1995 թ. փետրվարի 14-ի որոշմամբ իրավունք է վերապահվել ԼՂՀ կառավարությանը մինչև ԼՂՀ ԳԽ կողմից համապատասխան օրենքների ընդունումը ԼՂՀ Գերագույն խորհրդի լիազորությունների շրջանակներում գտնվող առանձին հարցեր ժամանակավորապես կարգավորել կառավարության որոշումներով: Չնայած դրան, ԼՂՀ ԳԽ կողմից 1995-98 թ.թ. ընդունվում են սեփականաշնորհման, ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին և այլ կարևոր օրենքներ: Նախկին կոլտնտեսություններն ու սովխոզները վերակազմավորվեցին գյուղացիական կոլեկտիվ /փայտտիրական/ տնտեսությունների, սկսվեց «փոքր» սեփականաշնորհումը:

1995 թ. սկզբներին ստեղծվում է պետական ռեզիստրի վարչությունը և սկսվում է կազմակերպատիրական տեսակի բոլոր ձեռնարկությունների գրանցումն ու պարտադիր վերագրանցումը: Վիճակագրական մարմինների կողմից հաշվարկվում են մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները /ՀՆԱ, գների ինդեքս և այլն/ հաշվառումը: ԼՂՀ կառավարության 1995 թ. մարտի 14-ի որոշմամբ ԼՂՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության կազմում բաժնի կարգավիճակով ստեղծվեց հարկային տեսչություն, որն ուներ սահմանափակ լիազորություններ հարկային վարչարարության կազմակերպման իմաստով:

1995-96 թ.թ. ԼՂՀ-ում ներդրվել են երկու նոր հարկատեսակներ՝ գույքահարկը և հողի հարկը, էական փոփոխություններ են կատարվել ավելացված արժեքի հարկի, կլցիզային հարկի և եկամտահարկի մինչ այդ գործող օրենքներում: Կառավարության որոշումներով մտցվել են ավտոճանապարհային մասհանումների և բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման համար վճարներ:

Ազատագրված տարածքներից ձեռք բերված ապրանքանյութական արժեքների իրացման դեպքում ձեռնարկությունների համար մտցվեց ստացվող հասույթի 80 տոկոս բյուջե վճարելու պայմանը: Լայն տարածում սկսեց գտնել ձեռնարկատիրական գործունեությունը բազաբազիների կողմից հատկապես սպասարկման ոլորտում: 1995-ի սկզբներին նրանց թիվն անցնում էր 600-ից¹, որոնց համար, կախված գործունեության տեսակից, մտցվեց եռամսյակային արտոնավճարի նվազագույն չափի համակարգը:

1997 թ. սկզբներին առաջին անգամ առևտրական գործունեություն իրականացնելու համար մտցվեց հաստատագրված վճարների պրակտիկան: Քանի որ հողը չէր սեփականաշնորհվել, ուստի նրա մշտական և ժամանակավոր օգտագործողների համար սկսած 1995 թվականից մտցվեց հողի հարկ, որի դրույքաչափերը բավականին ցածր էին և կախված էին

Այստեղ, և հետագայում բոլոր թվական տվյալները բերվում են ԼՂՀ վիճակագրության, պետնեզիստրի և վերլուծության պետական վարչության և ԼՂՀ հարկային տեսչության համապատասխան տարիների տեղեկատվական վերլուծական զեկուցագրերից:

հողատեսքերի տեսակից/վարելահող, արոտավայր և այլն/։ Զգալիորեն աշխուժացավ հարակիցն քաղաքականության կարևորագույն մասը կազմող հարկային վարչարարությունը՝ պայմանավորված հարկային օրենսդրությամբ պահանջների կիրառմամբ և հարկային մեքանիզմների աշխատանքով։ Չնայած հարկ վճարողների հերթական համարների համակարգը ԼՂՀ-ում ներդրվեց բավականին ուշ, 1998թ-ին, սակայն հարկային մարմինների կողմից զգալի աշխատանք տարվեց հարկատուների հաշվառման բարելավման, ստուգումների պրակտիկայի կատարելագործման և հարկատուների իրնազեկման ուղղությամբ։

Այդ տարիներին խնդիր էր դրված հարկային «բեռի» աստիճանական ու նշանակալի չափով տեղափոխումը դեպի ոչ պետական հատված և ֆիզիկական անձինք։

Ընդհանրացնելով երկրորդ փուլի հիմնական արդյունքները, կարելի է ընդգծել, որ այդ ընթացում համակարգի զարգացումն անմիջական կախման մեջ դրվեց բյուջեի եկամտային մասի կատարումից, որն աճում էր դինամիկ կերպով և հիմնականում հարկային մուտքերի ավելացման հաշվին։ Բավական է նշել, որ 1995 թ.-ին պետբյուջե փաստացի հավաքագրված մուտքերը 5 անգամ գերազանցել են 1994 թ. նույն ցուցանիշը, իսկ 1998 թ.-ին մուտքերը 1995 թ. համեմատությամբ ավելացել են գրեթե 1,5 անգամ։

Այդ փուլի վերջում սկսվեց հողի սեփականաշնորհումը, պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացները և օրենքների ձևով ընդունվեցին բոլոր 6 հարկատեսակների մասին օրենքները, ինչպես նաև հարկերի մասին և տեղական տուրքերի և վճարների մասին օրենքները։ Այլ կերպ ասած, այս փուլը կարելի է համարել հարկային համակարգի օրենսդրական կարգավորման, խտակեցման և կայացման փուլ։

Այդ փուլին բնորոշ էր մի կողմից հարկային բազայի ընդլայնումը և հարկային արտոնությունների սահմանումը, մյուս կողմից՝ կոշտ հարկային քաղաքականության իրականացումը։ Այսպես առաջին անգամ գինու-օղու արտադրությամբ զբաղվող ՊԿ/Փ/ Ս-երի համար մտցվեց ակցիզային հարկ, իսկ կառավարության 1997 թ. մարտի 21-ի թիվ 50 որոշմամբ սահմանվեցին էական հարկային արտոնություններ /շահութահարկի և ԱԱՀ-ի գծով/ նոր ստեղծվող ձեռնարկությունների համար։

Օրենքով տնտեսավարող սուբյեկտների համար սահմանվեց ավտոձանապարհային մասհանումներ պետբյուջե, որը հաշվարկվում էր շրջանառության ծավալից /ՀՀ-ում այդ չկար/։

Կառավարության 1996 թ. հունիսի 23-ի թիվ 165 որոշմամբ կանխիկ հասույթի օգտագործման խիստ ռեժիմներ սահմանվեցին հարկային պարտք ունեցող ձեռնարկությունների համար, որով արգելվում էր նման ձեռնարկություններին ինքնուրույնաբար տնօրինելու դրամարկի մուտք գործած գումարները և էականորեն ազդում էր ձեռնարկությունների ինքնուրույնության վրա։ Իսկ 1998 թ. վարչապետի որոշմամբ շինարարական ձեռնարկությունների

կատարողականից զանձվում էր միանգամից 15, 18 տոկոսը՝ որպես հարկային պարտավորություն:

Իհարկե, վերջին երկու ձեռնարկումները կարելի է համարել հարկային վարչարարությունն ուժեղացնելուն ուղղված քայլ, սակայն դրանք հանգեցրին տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնության նվազեցման՝ հատկապես սեփական շրջանառու միջոցների տնօրինման հարցում, որի պատճառով դրանք բեկանվեցին 1999թ. սեպտեմբերին:

Պետք է նշել, որ հարկային վարչարարության ուժեղացման առումով նշանակալից քայլ հանդիսացավ 1998թ. հարկային պետական վարչության ստեղծումը, որը իր մեջ ներառեց շրջանների հարկային տեսչությունները: Վարչարարությանը նպաստող քայլ կարելի է համարել նաև առևտրի և ապասարկման ոլորտում հաստատագրված վճարների պրակտիկայի կիրառումը և հաշվիչ դրամարկղային մեքենաների ներդրումը սկսած 1999թ.-ից:

Պայմանականորեն 3-րդ փուլը կարելի է համարել 1999-2001 թվականները, երբ, կարելի է ասել, սկիզբ դրվեց հարկային լիբերալ ռեժիմի քաղաքականությանը: Այն արտահայտվեց նախ և առաջ գործող հարկային օրենքներում, սկսած 2000 թ. հունվարի 1-ից էական փոփոխությունների ձևով: Այսպես, շահութահարկի դրույքաչափը սահմանվեց միասնական 15 տոկոս, անկախ հարկվող շահույթի մեծությունից, իսկ 2001թ. հունվարի 1-ից այն կազմել է 10 տոկոս, 2002թ. հունվարի 1-ից 5 տոկոս: Մտցվեց մի արտոնություն ևս կանոնադիր հիմնադրամի համալրման /ավելացման/ դեպքում, սկսած 25 մլն. դրամից և ավելի չափերի դեպքում, ձեռնարկություններն ազատվում են շահութահարկի վճարումից առաջին երկու տարում և այլն: ԱԱՀ-ից ազատում սահմանվեց ավարտուն վերամշակման ցիկլ անցնող գյուղատնտեսական մթերքների համար: ԱԱՀ-ով չհաշվարկվող շրջանառության շեմը թողնվեց 4 մլն դրամ, հողի սեփականատերերը 50 տոկոսով ազատվեցին հողի հարկից:

Այցիզային հարկի ավելի նվազ, մինչև 20-30 տոկոս, դրույքաչափեր սահմանվեցին գինու-օղու տեղական արտադրողների համար, 15-ից մինչև 5 տոկոս իջեցվեց եկամտահարկի դրույքաչափը, կանխիկ գնումների դեպքում հաստատող փաստաթղթերի բացակայության համար բյուջե զանձվող վճարները, իսկ եկամտահարկով չհարկվող շեմը 28 հազարից իջեցվեց մինչև 10 հազարը:

Նշանակալից չափով նվազեցվեցին նաև սոցիալական ապահովագրության վճարների դրույքաչափերը գործատուների համար՝ այն 2001թ. հունվարի 1-ից սահմանելով 15 տոկոս, իսկ 2002թ. հունվարի 1-ից՝ 13 տոկոս: Օրենսդրական հերթական փոփոխությունները ԼՂՀ-ում իրականացվեցին 2001թ. հունիսին, որոնք ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ մի կողմից ուղղված են հարկային վարչարարության խստացմանը, մյուս կողմից հարկատուների շահերի պաշտպանությանը: Այսպես, հարկատուները պարտավոր են 2001թ. հուլիսի 1-ից 100 հազար դրամից ավելի գումարների գործարքների մասին տեղեկություններ հայտնել հարկային մարմիններին: Նորություն էր նաև այն, որ հարկային մարմինների ու հարկատուների միջև

տարակարծությունների և տարընթերցումների դեպքում վճիռն ընդունվում է հոգուտ հարկատուի: Էական կարելի է համարել նաև ստուգումների անցկացման հարցերում հարկատուների իրավունքների ու շահերի ընդարձակման հանգամանքը, հատկապես ստուգման մասին նախօրոք / 3 օր առաջ/ նրանց տեղեկացման պարտադիր լինելու պայմանը: Ազատականությանը միտված քայլ կարելի է համարել արդեն 2001թ հունվարի 1-ից ինկասո-կարգագրերի կիրառման պրակտիկայի վերացումը հարկային մարմինների կողմից և հարկային վեճերի դատական վճռման միտումների ձևավորումը, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ստեղծումը ԼՂՀ-ում:

ԼՂՀ հարկային համակարգի դինամիկայի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ դրան ևս բնորոշ է եղել անցումային տնտեսությամբ երկրներում հարկային համակարգի ձևավորման առանձնահատկությունների մեծ մասը: Սկսած ձևավորման շրջանից հարկային համակարգն իր մեջ պարունակում էր տնտեսական հարաբերությունները խաթարող և շուկայական մեխանիզմների նկատմամբ ոչ բավարար վստահությունն արտացոլող բազմաթիվ դրույթներ, որոնց մեծ մասը, չնայած իրականացվող բարեփոխումներին, չարունակում են գործել մինչև այժմ, դրանով իսկ զսպելով հանրապետության տնտեսական ներուժի լիարժեք իրացումը:

Պետք է նշել, որ ժամանակի ցանկացած պահի հարկային քաղաքականության առումով հիմնական խնդիրը ոչ այնքան հարկման լավագույն կառուցվածքի որոշումն է, որքան այդ կառուցվածքով նախատեսվող որևէ փոփոխության նպատակի հատուկ սահմանումը, այդ տնտեսական հետևանքների /ինչպես արդյունավետության, այնպես էլ արդարության տեսանկյունից/ գնահատումն ու միջոցների ձեռնարկումը, երբ այն բացասաբար է անդրադառնում պետության հանդեպ հարկատուի վերաբերմունքի վրա:

Այս առումով իմաստ ունի նշել հարկատուների դժվար համակերպումը հարկային օրենսդրության շարունակական փոփոխություններին, պարզեցված հաշվառման ու հաշվետվության համակարգի բացակայությունը, առանձին հարկային արտոնությունների տրամադրման հարցերում խտրական մոտեցումները, հարկային վարչարարության կազմակերպման գործում էական թերացումների ու կամայականությունների դրսևորումները և այլն:

Խնդիր չընելով խորանալու ու հիմնավորելու բերված փաստարկներին ճշմարտացիությունը, ուղղակի նշենք, որ հարկային բարեփոխումները դեռևս ցանկալի արդյունքների չեն հանգեցրել ԼՂՀ պետական բյուջեի սեփական եկամուտների ապահովման ու հարկման բազայի ընդլայնման միջոցով դրանց ծավալների հետագա ավելացման առումով:

Դրանում համոզվելու համար կարելի է բերել վերջին երեք տարիների սեփական եկամուտների հետևյալ ցուցանիշները ԼՂՀ-ում /մլն. դրամով/

	1999թ.	2000թ.	2001թ.
Պետական և համայնքային բյուջեներով նախատեսված պլան	3549,0	3177,3	3171,4
Փաստացի մուտքագրվել է	2290,2	2495,4	2382,9
Կատարման տոկոսը	64,5	78,5	75,1
Հարկային եկամուտներ՝ ընդամենը	1825,7	1877,5	1622,8
Հարկային եկամուտների տոկոսը ընդամենը մուտքագրված մեջ	79,7	75,2	68,1

Ակնհայտ է, որ տնտեսական հարաբերությունները խաթարող հիմնական երևույթներից մեկը՝ ստվերային տնտեսությունը, մեծապես պայմանավորված է հարկային առկա համակարգի թերացումներով: Ընդ որում, ստվերայնությունը հատուկ է բոլոր երկրներին և ըստ որոշ հետազոտությունների ստվերային տնտեսությունը ՀՆԱ-ում կազմում է ԱՄՆ-ում՝ 4-33%, Ճապոնիայում՝ 4-15%, Գերմանիայում՝ 2-11% և այլն¹:

Իսկ ԼՂՀ-ում 2000թ. ավելացված արժեքի հարկի գանձման արդյունավետության վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ստվերայնության մակարդակը հանրապետությունում գերազանցում է 40 տոկոսը:

Անցումային տնտեսությամբ երկրներին բնորոշ է եկամուտների ծայրահեղ անհավասարություն, որը բնութագրվում է Զինի² գործակցի ավելի մեծ արժեքով:

Զնայած ԼՂՀ-ում վիճակագրական մարմինների կողմից մինչև այժմ չի հաշվարկվում այդ ցուցանիշը, այնուամենայնիվ կարելի է ընդունել, որ նրա մեծությունը չի գիջում ՀՀ համանման ցուցանիշի արժեքը:

Վերոշարադրյալից ելնելով կարելի է գալ այն տրամաբանական հետևությունը, որ ԼՂՀ-ում հարկային եկամուտների բավարար մակարդակի հավաքագրումը պահանջում է հատկապես բարձր եկամուտներ ստացող և բարձրարժեք գույք ունեցողներից հարկերի համամասնորեն գանձում, այսինքն եկամտային՝ ու գույքային հարկերում կիրառել պրոգրեսիվ դրույթաչափերի մեթոդը:

Զարգացող և հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որպես կանոն, տնտեսության մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում գյու-

¹ «Вопросы экономики» Ежемесячный журнал Российской Федерации N 10, 2001г.

² Զինի գործակիցը ցույց է տալիս տվյալ երկրում եկամուտների անհավասարաչափ բաշխումը: Ըստ վիճակագրական զնախատականների Հայաստանի Հանրապետությունում 2001թ. այն կազմել է 0,593 /տես ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական վերլուծական զեկույցը: Երևան, 2001.:/

դատնտեսությունը, մանր սուբյեկտները, ստվերային հատվածը, ազգային եկամտի մեջ փոքր մաս է կազմում աշխատավարձը: Այս ամենը նվազեցնում է որոշ ժամանակակից հարկատեսակների/ ինչպես, օրինակ, եկամտահարկը, ու որոշ չափով, ավելացված արժեքի հարկը/ վրա հիմնվելու և հարկման բավարար մակարդակ ապահովելու հնարավորությունը:

ԼՂՀ պարագայում նշված գործոններին ավելանում է կրկնակի ռիսկի առկայությունը, որը պայմանավորված է քաղաքական անորոշությամբ, չափունակվող շրջակա կուռքով, բիզնեսի զարգացման ենթակառուցվածքների ոչ համարժեք զարգացումով, ինչպես նաև ազգային հնչեղության այնպիսի հիմնահարցերով, ինչպիսիք են ԼՂՀ վերաբնակեցումը և պաշտպանության ապահովումը:

Հարկային եկամուտների ճիշտ մակարդակի որոշումը որևէ երկրի համար նշանակում է պետական ծախսերի ճիշտ մակարդակի որոշում, ինչն իր հերթին ենթադրում է դրանց հետագա բաշխման արդարացիության ապահովումը: Իսկ թե ինչ գործոններ են խանգարում այդ սկզբունքի իրագործմանը, բերենք ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական Վ. Ներսիսյանցի կողմից նշվող հետևյալ թերությունները տնտեսության մեջ՝

ա/ հարկերի հավաքման շատ նվազ մակարդակը, նոր տնտեսական համակարգից առավել օգտվող ու վայելող խավը շրջանցում է իր պետական պարտականությունը հարկ չվճարելով

բ/ թերաֆիսկալ կորուստները, այսինքն այն վնասները, որոնք վերաբերում են հասարակական ծառայություններին, օրինակ, էլեկտրաէներգիայի, ջրօգտագործման, և տրանսպորտի ոլորտում սպասարկման վարձերի չվճարումը խոշոր սպառողների կողմից

գ/ կոռուպցիան, որը բազմազան ուղղություններով վատնում է պետական ռեսուրսները և կոռումպացնում ու վտանգում մեր պետականությունը:¹

Մեր կարծիքով, դժվար է չհամաձայնել նման փաստարկների հետ նաև ԼՂՀ պարագայում՝ նկատի ունենալով ԼՂՀ և ՀՀ միևնույն տնտեսական տարածքում գտնվելու հանգամանքը:

1. «Ֆինանսներ և էկոնոմիկա. Հայաստան», հանդես հ.7, 2001թ

О проведенной в 1992-2001 гг. налоговой стратегии в НКР

К.А. Нерсисян

Резюме

В общественных отношениях роль налогов обусловлена объективной ролью государства, в связи с чем государство осуществляет свою распределительную функцию. В НКР, как в самостоятельной республике с переходной экономикой, формирование налоговой системы и ее дальнейшее развитие проходило и проходит в сложной военно-политической и экономической обстановке.

В статье анализируются периоды становления налоговой системы в НКР, подчеркивается важность разработки и принятия стратегической программы экономического развития НКР, подсистемой которой должна составлять налоговая стратегия.

К. А. Нерсисян

Summary

on tax strategy realized in 1992-2001 in the NKR

In social relations the role of tax policy is conditioned by an objective role of the state, in this connection the state is realizing its distributive function.

In the NKR, as in an independent state with the transitional economy, the formation of tax system and its further development has been taking place in complex military-political and economic situation.

The article analyzing the periods of tax system creation in the NKR, underscores all the importance of economic development of the strategic programme in the country under the system of which tax strategy must fall.